

ՅԱՐԳԱՆՔ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մխիթար Արքաեօր ծննդեան երեքհարիւրամեակին առիթով՝ լոյս կը տեսնէ այժմ «Բագմավէպ»ի բացառիկ քիւին երկրորդ հատորը, որպէս յարգանքի եւ շնորհակալութեան դափնեպսակ:

Յարգա՜նք եւ շնորհակալութիւն, նախ՝ նոյն ինքն երանաշնորհ Հիմնադրին, որ իր նախախնամական լոյսին պայծառ ցոլֆերով՝ սըրբալոյս միւռոնի նման օծեց ու ջերմացուց մեր հոգիները, բազմերանգ քրթնացումներով յուզեց ու խանդավառեց մեր սրտերը, Կրօնքի եւ Ազգի անխառն զգացումներով արծարծեց մեր սէրն ու նուիրումը:

Զգացիմք խորապէս՝ թէ կենդանի ու գործօն է, այսօր ալ, Մխիթարի աստղածորան լոյսը, որ կարող է Հայրենիքի եւ Սփիւռքի հեռաւորութիւնները մերձեցնել՝ ծիածան նարօտով, ու դառնալ զոդ սրտագին միութեան՝ մեր նախնիներու վառ հաւատքին ու մեր սըրբական մշակոյթին որպէս ջահ լուսանորոգ:

Յորելեանը խրախոյս ներշնչեց՝ աւելի խորապէս ուսումնասիրելու Մխիթարի կեանքն ու գործը, աւելի մօտէն ճանչնալու եւ ծանօթացնելու անոր լոյսին քաղաքին բեկբեկումները, Ժէ-ԺԸ դարերու մեր պատմութեան հորիզոնին վրայ երեւցող այլազան իրադարձութիւններու ընդմէջէն՝ վերակազմելով մեր Վերածնունդի բարդ պատմութեան մեծ հերոսին հարազատ դիմագիծը, իւրայատուկ արժէքով ու տարածքով:

Այդ հոգեզմայլ լոյսին ճանաչներէն դիւրուած, ամբողջ յորելեանական շրջանին, մեր ուշադրութիւնը առաւելապէս կեդրոնացուցիմք մեծ Սեբաստացիին անձին շուրջ, գիտակցաբար հրաժարելով ընդգծելէ անոր իսկ հիմնած Միաբանութեան դարաւոր վաստակը, թէեւ դժուարին էր անջատել այդ երկուքը, եւ գիտաւորն առանց իր գէտին՝ ուսումնասիրութեան առարկայ դարձնել:

Յարգա՜նք իր լուսաշող յիշատակին: Պատի՛ւ իր մեծագանձ վաստակին, յանուն բոլոր Հայութեան:

Արդարեւ մեծ ու բազմակողմանի եղաւ Մխիթարի դերը՝ մեր Վերածնունդի պատմութեան մէջ: Անոր յայտնութեամբ, ԺԸ դարու

սեմին, նախ՝ յանկարծ արագացաւ յամրափայլ առաջացող այն արշալոյսը, որ խոնարհ Մեղապարտով ծագում առած, 1500ի հորիզոնին, յաջորդաբար սկսած էր բեղմնաւորուիլ Արգար դպիրով, Քարմատաննց ու Կեսարացի հերոսներու ճիգերով, ու մանաւանդ Ոսկանի եւ անոր հետեւորդ Վանանդեցի եղբայրներու ձեռներէց աշխատանքով ու նուիրումով:

Անտարակոյս, Մխիթար մեր մեծագոյն հրատարակիչն եղաւ իր 55 հատորներով, ու ստեղծեց տպագրական կենսունակ գործունէութիւն մը, ի սպաս մեր փառապանծ Մշակոյթին:

Հրատարակչական այս ժիր աշխատանքին առընթեր՝ Մխիթար սկիզբ տուաւ ձեռագրական հարուստ հաւաքածոյ մը ժողովելու խանդավառ ու կազմակերպեալ աշխատանքին:

Աստուածաշունչի գլուխ-գործոց հրատարակութեամբ, մեկնողական իր քանկարժէք երկերով, հոգեշունչ մատենաներու քարգմանութեամբ եւ «Քրիստոնէական»ներու տպագրութեամբ, Մխիթար լայն ալօս մը բացաւ՝ սրբազան մշակոյթի բնագաւառին մէջ:

Գրաբարի ու աշխարհաբարի ֆերականութիւններով եւ Հայկազեան բառարանով, ան ամուր հիմքեր դրաւ այն շարժումին՝ որ հիմնովին պիտի տապալէր լատինաբան խորք հայերէնը ու պիտի վերածաղկեցնէր մեր նախնիներու սուրբ լեզուն, եւ անոր կողքին՝ նաեւ աշխարհաբարը նորածին, բայց մանաւանդ՝ պիտի կառուցանէր հայ լեզուաբանութեան արդի դպրոցը:

Հոս, սակայն, չեն աւարտիր Մխիթար Արքեպիսկոպոսական վաստակին բազմախորհուրդ ծախքերը:

Ան՝ որպէս լուսամիտ դաստիարակ, հիմնադիր՝ հայ վերանորոգ վանականութեան, իր իւրայատուկ ուղղութեամբ ու սեփական հաշտմունդ հոգեկանութեամբ, որպէս գաւազնալ՝ վերածաղկող աստուածաբանութեան հայրենի դպրոցին, առաքեալ՝ կրօնական միութեան աստուածահանոյ շարժումին, պաշտպան՝ ազգային նուիրական աւանդութիւններուն, արդարեւ դարձաւ՝ Արեւմուտքի մէջ՝ արծուեման ռաւիկիրան հայկական նոր դարաշրջանին, խորհրդանշող՝ ճշմարիտ աստուածաշնորհութեան հետ՝ իրաւ ազգասիրութեան:

Նորագոյն պրպտումներու լոյսին տակ, կրնանք աւելցնել՝ թէ Մխիթար հայ սրբազան երգարուեստի պատմութեան մէջ ալ իր ուրոյն ու նշանակալից դերն ունեցաւ. անոր շարժումով է որ հայ քատրոնը իր կենսունակ սկզբնափայլերն առաւ՝ հագարամեայ քմիքէ մը հտփ. անոր նախաձեռնութեամբ է որ դպրոցական ժիր գործունէութեան մը ցանցը նետուեցաւ՝ Սփիւռքի հայ իրականութեան մէջ. անոր ջանքերով է որ զարկ տրուեցաւ «արտաքին» կոչուած գիտութիւններու ուսուցման ու ծաւալումին՝ «մաքեմաթիֆայ»ի, աստղա-

բաշխութեան, երաժշտութեան եւ նարտասանութեան դասագրքերու պատրաստութեամբ:

Ծերունագարդ Հիմնադիրը, իր կեանքի վերջալոյսին, խանդավառօրէն լսեց Դաւիթ Բէկի գաղթական զորավարներու բերնէն, Սիւնիքի լեռներուն վրայ՝ իր օրով կատարուած ազատագրական պայքարին հերոսական դէպքերը, ու փառալերեց իր ձեռնասուն աշակերտները՝ անմահացնելու այդ պատերազմները, իբրեւ կտակ աւանդելով անոնց՝ հայրենի աշխարհագրութեան եւ պատմութեան ուսումնասիրութիւնը:

Մխիթարի չֆնաղ լոյսը համերգն է այս բոլորին, ներդաշնակ համադրումը այս երփներանգ պսպղումներուն: Այս է խորհուրդը Մխիթարի լոյսին. այլ բաներով՝ հո՛ս է մեծութիւնը Մեծ Սեբաստացիի լայնատարած ու բեղուն վաստակին:

Այդ լոյսը, իր շնորհաբեր ծնունդէն ահա՝ երեք հարիւր տարի հտփ, այժմ աւելի շփեօրէն կը փայլի՝ իր բոլոր պերճութեամբ:

Ուրեմն, շատ ճիշտ է բանասիրական գիտութիւններու «դոկտոր» Շ. Նազարեանի հեղինակաւոր յայտարարութիւնը՝ թէ «Որքան կը հեռանանք Մխիթար Սեբաստացիի ժամանակներէն, եւ որքան կը խորանանք այդ ժամանակներուն մէջ՝ անցեալի պատմութեան արդարաւս ֆնմութեան եւ գնահատութեան դիրքերէ, այնքան դիւցազնական կը դառնայ Մխիթար Սեբաստացիի կերպարը, եւ անհունօրէն մեծ՝ անոր գործն ու վաստակը» («Երեւանի Համալսարան» պարբերաթերթ, Երեւան 1977, ք. 2 [28], էջ 63):

Այսպէս, ահա՛, դարերուն հետ, յորելեանէ յորելեան, կը պարգուի խորհուրդը Մխիթարի լոյսին, կը կանգնի մեծ արձանը անոր լուսանորոգ վաստակին:

Յարգանք իր լուսաշող յիշատակին: Պատի՛ւ իր մեծագանձ վաստակին, յանուն բոլոր Հայութեան:

* * *

Յարգանքի եւ շնորհակալութեան սրտագին խօսք մըն ալ, յանուն «Բագմավէպ»ի հմբագրութեան – թէեւ Մխիթարեան Միաբանութեան կողմէ՝ առանձնապէս ամէնուն ալ գրուած է շնորհակալութեան նամակ – կ'ուզենք ուղղել բոլոր անոնց, որոնք արդարօրէն գնահատելով Մխիթարի անձն ու գործը՝ իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերին այս նուիրական Յորելեանին, աշխարհի չորս ծագերէն, համակրանքի եւ գնահատանքի խանդավառ արտայայտութիւններով:

Յարգանք եւ շնորհակալութիւն Հոռմի Սրբգ. Քահանայապետին, յարգանք եւ շնորհակալութիւն՝ Հայց. Եկեղեցւոյ արժանընտիր

Պետերուն, Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիայ գոյգ Գահակալներուն, Հայ Կթղ. Ամենապատիւ Կաթողիկոս-Պատրիարքին, Նուիրապետական Աթոռներու Առաջնորդներուն, Հայաստանի եւ Սփիւռքի Մշակութային Մարմիններուն, յատկապէս՝ ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիային, Երեւանի Մեսրոպ-Մաշտոցի անուան Մատենադարանին եւ Պետական Համալսարանին, արտասահմանի Բարեգործական ու Կրթական Հաստատութիւններուն, Լիզպոնի Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան, Հ. Բ. Ընդհանուր Միութեան, Հայրենակցական Միութիւններուն, Կրօնական Մարմիններուն, Միջազգային Մամուլի ներկայացուցիչներուն, եւ բոլոր անոնց՝ որոնք շնորհաւորական սրտագեղ պատգամներով, նամակներով ու հեռագիրներով, գրական ու գեղարուեստական տօնախմբութիւններով, ակադեմական նիստերով ու գիտական ելոյթներով, պատմական համադրումներով, հեռատեսլային ու ձայնասփիւռային հաղորդումներով (Փարիզ, Վենետիկ, Վատիկան, Մոնթեվիտոյ), մասնակցեցան մեր Յոբելեանին, ոգեկոչելով՝ երկրագունտային տարածքի վրայ՝ Հայութեան մեծ գաւակը, Միսիքար Սեբաստացին:

«Բազմավէպ»ի ներկայ թիւին վերջին մասը պիտի հնչեցնէ համերգ մը յարգանքի եւ շնորհակալութեան, խորունկ երախտագիտութեամբ եւ յուզումով թրթռուն, հրատարակելով այդ բոլորին ցնծագին արձագանգը:

Յարգա՛նք եւ շնորհակալութի՛ւն յատկապէս մեր սիրելի Հայ Մամուլին, որ լայնօրէն բացաւ իր սիւնակները՝ հանդէսներու նկարագրականներով, վերլուծիչ խմբագրականներով, եւ յաճախ՝ ամբողջական թիւեր նուիրելով Միսիքարի յիշատակին:

Յոբելեանի աւարտին, Միսիքարի որդիներս՝ կրկին անգամ հաւաքուած անոր լուսաշող դամբանին շուրջ, ոգեւին կ'ողջունենք անոր խանձարուրքն հանդիսացող՝ երբեմնի մայրաքաղաքը Արծրունի իշխաններուն, հեռաւոր Սեբաստիան սիրելի, իր պանծալի Սուրբ Նշան վանքով, եւ անոր նուիրական պարիսպներուն տակ՝ իրենց անմահական նիւթը հանգչող բազմաթիւ հայ վանականներով անտէրունչ, որոնք ներշնչարանն եղան պատանի Միսիքարի ծրագիրներուն: Ոգեւորութեան սարսուռ մը կ'ողողէ մեր սրտերն ալ այսօր, մինչ երկիւղած հաւատով եւ շնորհապարտ զգացումներով, Աստուծոյ եւ Հայրենիքի առջեւ կը նորոգենք մեր երդումը՝ նուիրումի եւ անխնայ աշխատանքի, «ի հոգեւոր լուսաւորութիւն Ազգիս մերոյ Հայկազուն», ջերմագին իղձերով յարգանքի եւ շնորհակալութեան:

ԽՄԲ.

ՄԻՍԻԹԱՐ

ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ *

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Պատիւ կը նկատեմ ինծի՝ Սուրբ Ղազարի Միսիթարեան Հայրերու հրաւէրը, զոր ընդունեցայ մեծ յօժարութեամբ, այս յարգարժան ակումբին հետ միասնաբար խորհրդածելու համար այն գերազանց դէմքին մասին՝ որպիսին է Երանաշնորհ Միսիթար, Հիմնադիրը Վենետիկի ու Վիեննայի հայ Հաստատութիւններուն:

Հաճոյքով ընդառաջեցի այս հրաւէրին, որովհետեւ ուղղուած էր ինծի՝ համակրելի հայ վարդապետներու կողմէ: Անոնց գիտական աշխատանքը սորված եմ ես գնահատել այն օրերէն իսկ՝ երբ փրկիսփայտութիւն կը դասաւանդէի Հարլեմի իմ բնիկ թեմիս մէջ: Հոն է, արդարեւ, կամ աւելի ճիշտ՝ Ամսդերտամի մէջ է որ, 1666ին, Ոսկան Երեւանցի կը հրատարակէր հայերէն առաջին Աստուածաշունչը, հայ գաղութի տպագրատունէն: Յաջորդաբար՝ Միսիթար ըստանձնած է այդ տպարանը, որ ձեր այժմեան այնքան համբաւաւոր տպարանին սկզբնահայրն՝ է եղած:

Սիրայօժար յանձն առի ներկայ բանախօսութիւնը, դիւթուած այն հնարաւորութեան՝ որով պիտի կարենամ ձեզի հետ միասնաբար խորհրդածել - ես՝ որպէս Նախագահ Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութեան - թէ ի՞նչ կ'ըմբռնէր Միսիթար, Հայ Եկեղեցւոյ «Միութեան Սատարիչը», երբ կը խօսէր միութեան մասին:

*) Պաշտօնական բանախօսութիւն Ն. Վ. Ծիր. Յովհաննէս Վիպրամտսի՝ եպիսկոպոսապետ Հոլանտայի եւ Նախագահ Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութեան, կատարուած Վենետիկի Տոժական պալատին մէջ, 22 Հոկտ. 1977ին, երեջ. Միսիքար Արքեպիսկոպոս Յովնան երբորդ դարադարձի հանդիսաւոր տօնախմբութեան առիթով:

1. Հմտ. P. MINAS NURIKHAN, Il servo di Dio Abate Mechitar, Venezia S. L. 1914, էջ 329 յջ. (այսուհետեւ՝ NURIKHAN):